

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՅԱՄՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԲԱՆԱԿԻ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

27.01.2017



Արարատի մարզպետարանի աշխատակազմի ևանձամբ իմ կողմից շնորհավորում եմ Բանակիօրվա կապակցությամբ և ցանկանում, որ մերհայրենիքի սահմաններին մշտապես իշխենխաղաղությունն ու ա նդորրը:

Բանակի կայացումն, անշուշտ, մեր անկախ պետության ամենանշանակալի ձեռքբերումներից է: Բանակի

կազմավորման, կայացման ուզարգացման համար այսօր երախտագիտությանխոսքեր ենք հնչեցնում բոլոր օղակների մասին՝զինվորից մինչև հրամանատար, ու հաստատապես ընկալում, որ նորօրյա սերունդը ևսպատվով ու ամենայն պատասխանատվությամբ է մասնակցումբանակաշինության նվիրական գործին: Թո՛ղ, որ առաջիկա տարիներին մերբանակն ունենա նորանոր նվաճումներ և ձեռքբերումներ՝ ի շահ և իբարօրությ ուն Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի:Սիրելի զինվորներ, պարոնայք սպաներ,Ձեզ նույնպես շնորհավորում եմ նվիրական այս օրվա կապակցությամբ և մաղթում, որ ռազմական գիտելիքներն ու կարողությունները հնարավորինս ցուցաբերեք միայն զորավարժությունների ժամանակ՝ խաղաղ ու անամպ երկնքի ներքո: